Սէրգէյի Մէլիքեանց Թագուհի Գուրգէնեանցս 1876»։

Այս Բզովնայի օդ ու ջուրը առողջարար լինելով Բագուի մի քանի պատուաւոր անձինք շինել են այն տեղ պատուական բնակարաններ և ամառները այն տեղ են անցնում, ուր պարոն Մինաս Մէլիքեանցի ամարանոցումն վայելեցինք մեծ հանդիստութիւն, ինչպէս Բագուումն նորա օրհնեալ տանը մնացինք 1888 թուի գարնանը և աշնանը երեք ամսաչափ։

Պ. Մինասի ամարանոցի պարտիզի մէջ գտնուել էին մի բանի գերեզմաններ և խաչքարեր Զ. Պ. և Ջ. Հայոց թուերով։

Այսպիսի թուականներով գրած կար և մի փոքրիկ ճգնարանի որմոց վրայ՝ յիշեալ մատրանց մօտ՝ նոյն Բզովնայում։

Պ. Մինասի ամարանոցը եւրոպական ճաշակով է շինուած։

Հինգերորդ ուխտատեղին Զամախւոյ թեմումն է մատուռն սրբոյն Գրիգորիսի Աղուանից Կաթուղիկոսի, որ գտնվում է Դարբանդ քաղաքից 20 վերստ հեռաւորութեամբ, հարաւային կողմում «Մօլլա Խալիլ» թուրքաբնակ գիւղի մօտ, ուր ըստ պատմութեանն և աւանդութեան նահատակուել է սուրբ Գրիգորիսը, մեր սուրբ Լուսաւորչի թոռն՝ յամի Տեառն 349 Աղուանից Սանատրուկ իշխանից[1]). ուրեմն մատուռս Վատնեան գաշտումն, Կասպից ծովի արեւմտեան եղերքումն է։

Սուրբ Գրիգորիսի նահատակութեան տեղւոյ պատմութիւնն վայելուչ եմ համարում շատ համառօտ՝ արտագրել Ջալալեանց Սարգիս եպիսկոպոսի գրածից՝ (Հատ։ Բ. յերես 418 և 419։)

ՎԱՏՆԵԱՆ ԴԱՇՏ

«Ելի ի քաղաքէն Դարբանդայ և անցեալ ընդ ծովափն մտի ի դաշտն Վատնեան, որ կայ տարածեալ յարեւելից յարեւմուտս

---

[1]) Մովսէս Կաղանկատուանցին գրէ, «Սուրբ Գրիգորիս նահատակեցաւ ի Սանեսանայ արքայէ»։ Գլուխ Ի։